ԲԱԶՄԱՎԷՊ
ՀԱՆԳԻՍԱՐԱՆ

ՀԱՆԴԷՍ ՀԱՅԿԱԿԱՆ

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԽՈՏՈՐԶՐՈՑ[1]

Գ. Այս երկրին դիրքը և իւր բնակչաց վիճակը վեր 'ի վերանց մը իբրև հեռուն կեցած նկարագրելէն վերջը, քանի մը խօսք ալ կ'ուզենք այն տեղւոյն տարեկան կենաց նշանաւոր կէտերուն վրայ զուրցել իբրև ականատես և ներկայ։

Զատիկն երկու շաբաթ անցած էր և կարդէ դուրս գեղեցկութիւն մ'ունէին օդերը երբ քանի մը ընկերներով ճորոխ գետին ընթացքը թողուցինք, և ծամածուռ գետի մը ուղղութեամբը խոտորելով, սկսանք երկու բարձրագագաթ լերանց միջէն դէպ 'ի ներս երթալ. և երկու երեք ժամ ժայռահատ ճամբաներ կտրելով, որ տեղացուց լեզուաւ կապան կը կոչուին, հասանք ըստ բաւականի մեծաչէն փայտէ կամուրջ մը, ուսկից անդին չորս կողմերս պատող լեռները նարընջի պատառներու նման մաս մաս փեռեկելով, նոր տեսարան մը առջևնիս բացուեցաւ, որուն վրայ արդէն քիչ շատ պզտի գաղափար մը տուած ենք Բազմավիպիս նախընթաց թերթերուն մէջ։ Ուստի և այս լերանց պատառուածներով մեզ առաջնորդող գետն 'ալ գըլխաւոր երեք ճիւղ բաժնուեցաւ. պզտի մաս մը արևելեան կողմանէ կ'ինջնար, ուրիշ մ'ալ արևմտեան կողմանէ, և աւելի մեծագոյն մաս մ'ալ արևմտեան հիւսիսէն, և ասոնց ուղղութեամբ ալ բաժնուած գտանք այս վիճակիս գեղերը. որոնք թէ և անուամբ գրեթէ տասնուչորս կը համրուին, բայց ամենքն մէկտեղ եօթն պզտի հասարակութիւններ կը կազմեն։ Եւ այս գեղերը ոչ թէ ըստ եւրոպական օրինի իրարմէ ցրուած կը կենան, այլ խումբ առ խումբ իրարու կպած են տներն. և իւրաքանչիւր գիւղը 60 կամ 70 տներ է բաղկացած է, և ամէն մէկ տունը իւր առանձին ախոռն ալ ունի, վասն զի հօս չկայ Հայաստանի ուրիշ տեղերու պէս տունը և ախոռը մի և նոյն յարկի տակ շինելու սովորութիւնը,

1 Տես հա. ԼԳ. հրես 933։
Պրակ գ.

digitised by A.R.A.R.@

այլ մանաւանդ ընդհանրապէս դիւղը երկու մաս կը բաժնուի. մէկ մասն ամբողջ գոմ՝ կամ բնա տեղւոյն հնձման գռեմ, և միւսն ալ տուն։ Ցները սովորաբար կամ կրկնայարկ են կամ միայարկ, իսկ գոմերն եռայարկ. առաջին յարկը կը բնակին կով, ջորի, ձի և այլն. երկրորդին մէջ մանրոտանիներ, այս ինքն այծ, ոչխար.. երրորդին մէջ ալ խոտ կը պահուի. այս շէնքին ճակատին վրայ, վերջին երկու յարկին վրայ՝ երկու հատ ալ կռնակ կայ, այս ինքն հատ հատ դերաններով դէպ 'ի դուրս երկու ծածք ձեւացեր են, որոնց վրայ ալ կը տեղաւորեն տեսերոն կոչուած ամառ ժամանակ կտրուած ծառոց թարմ ճիւղերը՝ ձմեռը մանրոտանի կենդանեաց կերցընելու համար։ Թէ և այս երկրին կլիմայն աշխարհագրական բաւական բարձր աստիճանի տակ կ'իյնայ, սակայն թերևս իւր դրից ձեւացման պատճառաւ է, որ ընդհանրապէս լեռնոպատ է, արևուն ճառագայթից ցոլայմամբ բաւական տաքութիւն մը սկսած էր այս միջոցներուս. և ամենքը քաշուելու վրայ էին իրենց ամարանոցները, որ իրենք ագարակ կը կոչեն, և որ աւելի լերանց գագաթներու մերձաւոր են. և իրենց բարձր դրից պատճառաւ, այս ժամանակս հաղիւ ձիւնը ցամքած էր և ժամանակ էր ցանելու այն քանի մը տեսակ սերմերը, որ այն տեղերը կը բուսնին. որ է վարսակ, դարի և ուրիշ քանի մը ընդեղէններ։ Այս ագրարներուս մէջ կ'անցընեն տարուայն մեծ մասը խոտորիզրցիք և իրենց կենդանիները. վասն զի հոն ալ ամէն ընտանիք ունին իրենց տունը և դուռը։ Քանի մը օր հաղիւ անցաւ, իմ հիւրընկալուս ալ իւր արտերը սերմանելու պատճառաւ ագրակը եկաւ, որ Աղբիի կը կոչուէր. ուր ես ալ հարկադրուեցայ մէկտեղ երթալու. և իրաւ զուլցելով երթալուս վրայ շատ գոհ եղայ և կարծես մէյմ'ալ պիտի չուզէի անկէց բաժնուիլ։ Եւ կընամ ըսել որ անկէ աւելի ուրիշ տեղ մը բնութիւնը իւր ամէն գեղեցկութիւնը իմ աչքիս չէ ներկայացուցած մանրամասնաբար։ վասն զի ինչպէս ըսինք, արդէն նոր սկսած էր ձիւնը ցամքիլ այս կողմերը. և քանի որ անիկայ մէկ կողմանէ իւր քղանցքները իրեն ամփոփելով ետ ետ կը քաշուէր դէպ 'ի սարերը կամ 'ի խորս ծմանկայ, խաժուրիկը իւր լեզուվ, ձնաճաղիկն իւր բուրմամբ, կթող, հօրոտ մօրոտը իրենց աքանչելի հոտով ու գոյնով, և քիչ մը վերջը մանիուշն ու անկէց վերջն ալ զաւթրանն ու կակաչն բոլոր մտաղրութիւնս իրենց յաջտակելով, օր աւուր սրտիս ուրախութիւնը կ'աւելցուցէին։ Բաց 'ի այս անկենդան, բայց կենդանութիւն ներշնչող երևութից, շատ ախորժելի էին ինձի դարձեալ թռչնոց դայլայլիները. վասն զի դեռ արշալոյսը չծագած զարօշը իւր տխուր ու մելամաձայն սուլիլովը կարծես լուռ ու խաղաղ կեցած բնութիւնը արթնցնել կ'ուզէր քաղցր առաւօտ մը աւետելով. և անդիէն կուկուն կամ կրկուն աւելի տխուր կերգով քարաձերպի մը կամ նորածիլ բոշխի փունջի մը տակը ամփոփուած զարօշին պատասխան կուտար իւր ընդհատ ընդհատ հատկիւռ ձայնովը։ Եւ ահա արեգական հետ մէկտեղ հողամայն ալ կարծես դոհ չըլլալով իւր մութրագոյն վեսորոց տխուր երևութէն, օդոյ մէջ հաստատուն կեցած՝ մաղի պէս կը շարժէ իւր թեւերը, որպէս զի արեգական ճառագայթները խոտորնակի ցոլալով տնոնց վրայ նոր նոր գոյներ տան անոնց. դեռ աւելի բարձրէն հնաչը (այսպէս կը կոչեն արծուոյ նման մեծամսրմին թռչուն մը որ այս կողմերը շատ կը գտնուի) գլուխը վար կախած՝ որահայեայ աչքերը սաղիս տեղին կը դարձընէ իւր սովալուկ որովայնը յագցուցելու ճարակ ինդրելով։ Իսկ պարկոյնեներու և կապաւներու երամները անհամբեր խումբ խումբ նորասերմ արտերու վրայ կը յարձրկին դեռնին երբեք մնացած հատերէն իրենց ալ մասնի հանելու. դարձեալ ուրիշ բազմութիւն մը կը տեսնուի ագռաւներու,

digitised by A.R.A.R.@

անծեղներու և ճղարդներու և ասոնց հետ մէկ տեղ կոտտաներու, որոնց գարշելի ձայնը չարս կողմը կը բռնէ։ Ոչ ինչ նուազ ախորժելի էր լինի այն տեսարանն ալ՝ որ առաւօտն արեգակը դեռ մէկ լճակաի չբարձրացած, առ-ջևս կը բացուէր. վասն զի այս միջոցս է որ հոն այս ժամանակս անասունները արածելու կը հանեն. ուստի երբոր կը տեսնայի որ բոլոր կովերը, երինջները և մոլիները քաշերուն [1] վրայէն կը սկսէին երկընալ և բառաչելով, կամ ըստ տեղւոյն բռռչտալով առաջ երթալ. այնչափ ախորժս կու գար որ մինչև երբեմն ես ալ հետերնին ադաջ կ'երթայի, մանաւանդ երբ կը տեսնայի ծրջ-ւար կովերը, որոնք կարծես սրտեր-նուն կէսը գոմին մէջ թողուցած էին, այնպէս ողորմ ողորմ աչքերնին ետև-նին կը դարձնէին. և սակայն աշխոյժ տղայոց կարծր բրին հարուածէն ահ-բեկ առաջ կը վարէին իրենց քայլերը առանց ուղելու։

Եւ քանի որ տղայոց մէկ մասը հան-դիրն 'ի վեր (հանդիր կ'ըսուին այն տեղերը որ հաստաքաց կը վերաբե-բին և կենդանիներ արածելու կը ծա-ռայեն) կենդանեաց պահպանութեան կը զբաղին, միւս մասն ալ՝ մայրերնին կոտոր մը սեր կամ փեր կամ դուլ (որ է նոր չլինած պանիր) տալով, կաղարդ ձեռքերնին անցուցած կը խրկեն որ երթան կէս օրուան ճաշը պատրաստե-լու համար եղինձ, ձիվան, փիթեղ, աւելուկ, մանչխաչուկ ժողովելու և կամ մանդ որ ժամի նման բոյս մ'է բայց աւելի դառն։ իսկ տղայք դաշտը կամ դոլոկները իյնալէն վերջը երբեմն երբեմն իրենց մոր պատուէրը հաղիւ կը յիշեն, ապագայ վայելմունքէն ա-ւելի ներկայն կը մտածեն, ինչպէս այն հասակին բնական է. իրենք արագ ա-րագ աչքերնին ապրիս անցին կը դար-ձընեն փնտռելով թերկիկ, ցիկ, գիներկոր, պապուչ, կաքաւիտոր, ձիրզտրրուչ և կիմակոյռ, որոնցմէ շատերն և ոչ կեղևերով կարօտութիւն ունին, նոյն վայրկենին քմաց ախորժը գոհ ընելու համար։

Այս գարնանային զուարճալի կեան-քը ամուսան մը չափ ժամանակ վա-յելելէն ետքը, հարկ եղաւ որ նորէն առաջուան տեղս դառնամ, ուր գրե-թէ բաւական ատեն լրիկ մինչիկ տխուր կեանք մը անցուցի. վասն զի արեգակը հորիզոնէն շատ բարձրացած էր, և ան-խնայ իւր տապակիչ շառաւիղները կը ցոլացնէր նորաբարդ բնութեան վրայ, որ բոլոր իրեն դեռատրութիւն կանչու-թեամբ սգալի տեսարան մը առնելով, կարծես թէ ծունկի վրայ եկած երկրպագ կ'աղաչէ որ կամ երկու կաթիլ անձրև թափէ կամ գտնէ քիչ մը մեղմացունէ այն սոսկալի տաքութիւնը։ Սակայն երկընքէն առաջ շարժեցաւ ժողովրդեան սիրտը, փայտասները և բահերը առած խանդաղուած առուակները սկսան նորոգել ծանր աշխատութեամբ, և արտերը ջրելու զբաղեցան գիշեր ցո-րեկ։ Ուստի քանի որ ամեն մարդ իւր գործին զբաղած այն երկայն օրերն ա-ռանց իմանալու շուտով շուտով կ'անց-նէր, լինի համար որ շատ անդամ պարապ և առանց ընկերութեան կը մնայի, այն օրերը մէկ մէկ շաբաթ և շա-բաթները ամիս կ'երևային։ Այն ատեն յիշեցի ու իրաւունք տուի այն եօթա-նասնամեայ գիւղացի ծերոյն խրատին, զոր երկնկութիւն փնտռող արաքացի հովուին տուաւ, թէ մարդուս երջան-կութիւնը չարունակ գործելուն մէջ է և ոչ եթէ դատարկ կենալուն։ Եւ քանի որ մէկ կողմանէ արը և կանայք այս գոր-ծերով կ'անցնէին իրենց օրերը, միւս կողմանէ ալ սկսան քիչ ատենէն աշ-նանացան և մանաւանդ անկրգի արա-տերը դեղնել և խոտի մարդերն ալ իրենց վառ կանաչութիւնը կորսընցունել և չիչ կազդոյն երևոյթ մը առնուլ. ուստի փայտատի ու բահի պաշտօնը դեռ չլմնցած, մանգաղները պատրաստե-ցին. և մեծ փոյթ մը կը սեսնուէր ա-

[1] Քաշ կը կոչեն այս կողմերը կենդանիներուն գլուխէն սկսեալ մինչև արածելու տեղ ընելի ճամբաները։

digitised by A.R.A.R.@

մենուն վրայ՝ շուտով եղածները քա-
ղելու և քաղածները տեղաւորելու, ո-
րովհետև այն օրերն՝ օդերը շատ սպառ-
նական էին և անկէց ալ աւելի վարդա-
վառի տօնը կը մօտենար, յորում կ'ու-
զէին ամէն ստիպողական գործերէ
թեթեւցած գտնուիլ եւ իրաւունէ հա-
յաստանեայց աշխարհին այսպիսի հը-
նաւանդ տօնի մը յիշատակը, որ յետոյ
տերունական սրբազան յիշատակի մը
վերածուելով աւելի ևս պայծառութի-
մը առաւ նոյն աշխարհքին մէջ. քիչ
շատ իւր նշմարանքը դեռ ևս կը պահէ,
այս կողմերը, իրեն առանձին ու մաս-
նաւորեալ արարողութիւններովը։ Ցա-
ռի ինչուան սոյն տօնին նախընթաց
շաբթուն հինգշաբթի օրը՝ բոլոր արտա-
քին գործերը լմնցուցած կ'երևային, և
ամէն մարդ մեծ փութով մը ներքին
պատրաստութեան մը հետ էր ամբողջ
ուրբաթ ու շաբաթ օրը. օրիորդք ու
մանկունք ձեռքերնին հինայով գունա-
ւորեցին, երկայն ժամանակէ՛ի վեր ա-
ւաղակաց վախէն խորերը ծածկած
զարդարանքները հանուեցան, և չար-
չիներու լաթեղինաց ծրարները բա-
ւականապէս պարպուեցան այս երկու
օրուան մէջ։ Եւ ահա շաբաթ օրը արե-
գակն երկու լմաչափ մնայաց՝ մէկ
շարժմունք մ'էր սկսաւ ամէն կողմանէ.
ամէն մարդ ունեցածը չունեցածը հա-
գած, մանուկ տղայ արք և կանայք խիզ-
կուներուն վրայէն սկսան երկընալ,
դէպ՝ի վերայիշեալ ագրակները երթա-
լու համար, ուր որոշուած է այն ցանկալի
օրուան կատարումն։ Ես ալ՝ որ շատոնց
՝ի վեր այսպիսի բազմութիւն մը չէի
տեսած, այնչափ հետաքրքրութիւնս
շարժեցաւ, որ առանց շատ մտածելու
խառնուեցայ այն բազմութեան մէջ. և
առանց իմանալու գրեթէ երկու ժա-
մուան ճամբայ ըրած էի՝ երբ տեսայ որ
հոն հասած եմ, ուսկից երկու ամիս
առաջ չէի ուզեր բաժնուիլ. շատ փո-
խում էին երևոյթները, այնպէս որ
շատ տեղեր ալ կարծես և ոչ տեսած
էի։ Շաբաթ իրիկունը առանց կարդէ
դուրս աղաղակներով ամէն մարդ իւր
տունը քաշուեցաւ։ Եւ կիրակի առա-
ւօտն երբ որ ուզէցի կոչնակի ձայնով
եկեղեցի երթալ հաղիւ կենալու տեղ
մը գտայ, այնչափ լեցուած էր եկեղե-
ցեակը. և շատ չինուեցայ, տեսնելով
անթիւ բազմութիւն մը սուրբ հաղորդու-
թեան մերձեցողայ, որոնք դեռ իրենց
մարմնաւոր ուրախութիւնը չսկսած
հոգւով կը զուարճանային։ Ցայնաւոր
պատարագէն վերջ երբ դուրս ելանք,
չէի գիտեր որտեղ կամքը կատարեմ,
վասն զի ամենայն ոք կ'ուզէր որ դինքը
պատուեմ իւր նախաճաշին մասնակից
ըլլալով. բայց վերջապէս տեսնելով
որ աւելի վայելուչը և մանաւանդ աւե-
լի շահաւորը հոգւոր հօր գնացած տեղն
է, հոն ուզղեցի ճամբաս և երթալուս
վերայ շատ գոհ եղայ և երբէք ալ պիտի
չզղջամ Ցեղոյն համեմատութեամբ ա-
ւելի առատ քան չափաւոր նախաճաշէ
մը վերջը, քալելու ելանք դէպ՝ի դե-
ղին ուրիշ մասերը և ահա անդիէն առ-
ջևնիս ելան բազմութիւն մը արանց և
կանանց, որոնք մեծ աղաղակով մը մէ-
կը կը տանէին զգեստներով հանդերձ
գետին մէջ թաթղելու, ՝ի պատիժ ատա-
կով խաղի մը մէջ յաղթուելուն, որոնց
վարձքն էր երկու դրձի (խոյ) գին։ Եւ
ցորեկուընէ ետքը, այս երկու խոյերը
մորթած և շամփուրի վերայ առած, սկը-
սաւ ամբողջ ժողովուրդը դէպ՝ի դիմա-
ցի արծաթափայլ աղբիւրը երթալ եր-
գելով ու պարելով, ուր բորբոքած կը
վառեր շատ խնամքով յարմարցուած
կրակը։ Քանի որ այս կրակին վրայ
խոյոց մարմինը կեկեցալով ճեռեի հոտը
մինչև երկինք կը բարձրանար, անդին
բազմութեան մէջ զանազան հանդէս-
ներ կը կատարուէին. ոմանք դոյլ մը
ջուր մէջ տեղ առած ծաղիկ (վիճակ)
կը ձգէին զանազան նպատակներով.
ոմանք կը պարէին և այլք կ'երգէին,
մինչև որ խորովածներն և ուրիշ պատ-
րաստութիւնները հասան և կերու-
խումի ժամանակն եղաւ, որուն ալ եր-
կայն երկայն բարեմաղթութիւններով
հաղիւ վերջը եկաւ։ Այն ատեն անցու-
ցի մոքէս թէ անչուշտ այս սովորու-

digitised by A.R.A.R.@

թիւնս ալ հին հեթանոսութեան ժամանակէ մնացած է, բայց բնականապէս մեծ կերպարանափոխութեամբ։ Այս ամէն բան կատարուելէն վերջը, որ արդէն գիշերային մութն ալ վերայ հնանելու մօտ էր, նորէն գիւղը դարձան առջի հանդիսաւորութեամբ. և կալի մը մէջ մախրի շերտերով բոցավառ ջահ մը վառած բռնեցին բոլորապարը։ Բայց ինչպէս որ արդէն այն օրուան ամէն գործոց մէջ չափը պահելը մուցեր էին, հօս ալ սկսան իրենց հոգւոր հօր պատուէրները ոտքի տակ առնուլ, առանձին պարով գոհ չըլլալով, սկսան խառն պարը, այս ինքն արք և կանայք 'ի միասին, որ խստիւ արգիլած էր հոգւոր հայրը. բայց կ'երևայ թէ քանի մը հոգեսէրներ չդիմանալով այս եղած անկարգութեանը, գնացին հոգւոր հայրը քնէն արթնցուցին, որ կէս մը իրեն պատճառած անհանգստութեան վերայ և կէս մը ալ եղած անկանոնութեան վերայ նեղացած, գաւազանը ձեռք կրակ կտրած եկաւ. բայց դեռ հօն չհասած աճապարանօք պարը ցրուած գտնելով, նեղացած քանի մը խօսքեր զուրցելով, այնպէս մը գաւազան գետին զարկաւ որ երկու կտոր եղաւ, որուն ինչ եռանդով զարնուելուն դիմացի լերանց արձագանգներն ալ վկայեցին։

Այսպէս անցնելով վարդավառի առաջին օրը և գիշերը, երկրորդ օրը և գիշերն ալ քիչ շատ առաջնոյն նման հանդէսներով անցան։ Իսկ երրորդ առաւօտը մեծ տխրութիւն մը նկարուած կը տեսնուէր ամենուն երեսին վերայ, որպէս թէ ըրածնուն վերայ սաստիկ զղջացած ըլլային. բայց ես կարծեմ որ այս տխրութիւնը՝ անոնց հինգ վեց օր առաջ ունեցած մոռամանց նորոգումն էր, այսինքն է անյապաղ նիւթական գործոց և աշխատութեանց դառնալու հարկադրութիւնը։

Ասկէց վերջը իրաւ որչափ ալ որ ժողովրդեան աշխատութիւնը ծանր էր, կալերը, խոտերը և տաները տեղաւորելու և կարգադրելու պատճառաւ, սակայն այլ և այլ զուարճութիւններ ալ միշտ անպակաս էին։ Վասն զի բաց 'ի երբեմն երբեմն եղած գիւղական հանդիսներէ, շատ կիրակի և ամէն տօնի օրեր անվրէպ գրեթէ ամէն գիւղի մէջ ալ ժամի հանդէս կը կատարուէր. ժամ կ'ըսուի այս կողմերը նաև ննջեցելոց հոգւոց համար եղած հացկերոյթի մը, որ շատ հնաւանդ սովորութիւն մ'է. որ ինչպէս եօթնօրեքը, ասանկ նաև ժամը, ամէն տուն իւր ննջեցելոյն մեռնելէն քանի մը տարի վերջը, ձայնաւոր պատարագով մը հասարակաց հացկերոյթի մը կու տայ, որուն մասնակցելու համար ոչ միայն հրաւէրքի հարկ չկայ, այլ և երթալը մեծ բարեպաշտական գործ կը համարուի, ինչպէս չերթալն ալ հակառակը։ Այսպէս նաև անպակաս էին յաճախ ամէն գիւղէն հարսանեաց հրաւիրակները. վասն զի այս միջոցներս աշնան վերջերը ըլլալով, ամէն կողմանէ սկսան վերադառնալ այն տարիներով հեռացած մանկուիքը, որոնցմէ շատերը այնչափ փոխուած էին որ և ոչ իրենց սիրականներէն կը ճանչցուէին։ Յաուղիւ այս կողմերու հարսնիքն ալ շատ զուարճալի ու հետաքրքրական է. բայց խիստ երկայն ըլլալով մանրամասնաբար գաղափար մը տալը, այսչափս միայն զուրցեմ, որ ութ օրուան մէջ հազիւ կը լմննայ ամբողջ հարսանեկան հանդէսն, բայց երեք օր միայն են բուն հարսնիքի օրերն. առաջին օրուան մէջ հարսուորները՝ այս ինքն հանդիսականք կը ժողովին, երկրորդ օրը հարսը կը բերուի և պսակը կը կատարուի, և երրորդ օրն է շաբաթի օրը։ Շաբաթ կը կոչուի այն հանդէսը, յորում մէջ տեղ կը դրուի սեղան մը և անոր չորս կողմը կը բազմին բոլոր հանդիսականը, ուր կը գտնուին նաև հարսը՝ երեսը քողով ծածկուած և փեսան իրեն հարսնիքով և թագադրաւորու

բերան, «այ քոզ բանայ քոզ բանայ, հայսին կեսրայ (կեսրայր) դալով քոզ բանայ» մինչև որ գայ կանչուողը և սեղանին վրայ ձգէ հարսին տալի ընծան, որ սովորաբար կամ ձեռաց ապարանքան է, կամ վզնոց կամ վերջապէս զարդի վերաբերեալ բան մը. անիկայ այս երես տեսակը (վասն զի երես տեսայ կը կոչուի այս պարգևը,) հօն ձգելուն պէս՝ ամէնը միաբերան կը պոռան երկայն խաղով մը երե՛ս ձերմա՛կ։ Եւ պարգևաբերը կ'երթայ համբուրիւ կը տեսաւորի հարսին ու փեսային հետ երկայն երկայն բարեմաղթութիւններ ընելով, որոցմէ սովորականն է «Միասին ապրիք, միասին ծերիք ու ծաղկիք»։ Եւ հօն տեղ գտնուող ամէն անձինք ալ անուամբ կանչուելով կ'երթան իրենց աստիճանին համեմատ, և շատերն ալ իրենց աստիճանէն շատ վեր, վասն զի հօն անձնական պատիւ կը մնայ, երես տեսաներ կը ձգեն ու բարեմաղթութիւններ կընեն։

Միով բանիւ զանազան զուարճութիւններ կատարելով ձմեռուան հասանք, ուր բուն ձմեռը ինչ ըսել է շատ աղէկ հասկցայ. զի ձիւնը կարգէ դուրս բարձրութեամբ մը կոխեց, իսկ սառերու կոյտերը կարծես այն սոսկալի երաշտութեան գետին ջուրը արգիլել կ'ուզէին. լեռան պէս առվնը դիղուելով և տներուն դռներուն ծայրէն կախուած սառերուն ծայրերը մինչև գետին կը հասնէին։ Եւ սակայն այսու հանդերձ կարծես օդու մէջ մէկ առողջականութիւն մ'ալ կար. ոչ մէկուն ձեռքը ուռած տեսայ կամ վիրաւորուած, և ոչ ալ այն աստիճանի ցրտութենէն տանջուիլ մը ժողովրդեան մէջ։ Բատ բաւականի հանդիսաւոր տօնուեցան Ծննդեան և Կաղանդի տօները, մանաւանդ վերջինս, յորում ամենէն աւելի ուրախութիւնը տղայոց եղաւ, որոնք առաւօտ կանուխ ելած ամէն տուն կը քալէին շնորհաւոր նոր տարի բարեմաղթելու, չանդուները չորացեալ պտուղներով լեցնելով։ Այսպէս նաև բարեկենդանն ալ որ գրեթէ ամբողջ երկու շաբաթ տևեց՝ ամէն տեսակ գեղջկական զուարճութիւններ անպակաս էին, և մասնաւոր փոյթ մը կը տեսնուէր կերուխումի. զորոնք թէ և առաջ մըքովս կը պախարակէի, բայց յետոյ մեծապէս իրաւ համարեցայ, երբ տեսայ անոնց մեծ պահքի մէջ ըրած կարգէ դուրս պահեցողութիւնները և մահացուցմունքները, որոնք առանց մասնաւոր նախապատրաստութեան մը դիմացուելու բաներ չէին։ Բայց ինչպէս որ ամէն գոծոյ դժուարութիւնը մինչև կէս հասնիլն է, սասկալ մեծ պահքի ծանրութիւնը մինչև անոր ընդմիջելն խիստ զգալի եղաւ. անկէց վերջը արեգդէմ տեղերը ձեան խայծերը սկսելով, արտաքին զբաղմունքներու ալ ասպարէզը կամաց կամաց բացուեցաւ, ոչխարաց հօտերը իրենց գառնուկներով նոր բարբոյս կանաչութեան վրայ սկսան սփռիլ. տղայ, մանուկ, պառաւ և ծեր՝ նոր ոգի մը զգեցան. ամեն կոկոն ծաղիկ եղաւ, ամեն մերկ փայտ տերև հագաւ, ամեն չոր հող կանաչդարձաւ, ամենայն ինչ զուարթացաւ պայծառացաւ. և եթէ տխուր մէկը կար, եղկելի եղն էր, որ ամեն անբանիցմէ աւելի մարդուս պատուհասակից է Եւայի յանցանացը։

Հ. Ա. Պ.

digitised by A.R.A.R.@